TM AUDIT

22, Երևան 0014, Պ.Սևակ 8; հեռ.՝ (374 11) 60 70 81; info@tmaudit.am, www. tmaudit.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Զեյթուն» ուսանողական ավան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Զեյթուն» ուսանողական ավան» հիմնադրամի (Հիմնադրամ) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2023թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական հոսքերը՝ համաձայն փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Թաթուլ Մովսիսյան
Գլխավոր տնօրեն/ Առաջադրանքի ղեկավար

27 հունիսի, 2024թ.
ք.Երևան, Պ.Սևակի 8

'000 դրամ	*Ծանոթ.*	*31/12/23*	*31/12/22*
Ակտիվ			
Հիմնական միջոցներ	6	94,379	97,888
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		***94,379***	***97,888***
Պաշարներ	7	527	1,209
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր		8,018	766
Դրամական միջոցներ	8	48,426	35,928
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		***56,971***	***37,903***
Ընդամենը ակտիվներ		***151,350***	***135,791***
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կուտակված շահույթ		108,223	95,563
Ընդամենը սեփական կապիտալ		***108,223***	***95,563***
Ակտիվներին վերաբերող շնորհներ	9	25,140	26,116
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		***25,140***	***26,116***
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր		1,703	2,017
Կանխավճար ծառայությունների համար		11,765	8,655
Շահութահարկի գծով պարտավորություն		1,657	1,482
Այլ ընթացիկ հարկային պարտավորություններ		791	377
Աշխ.-ի և այլ կարճ.հատուցումների գծով պարտավորություն	10	2,071	1,581
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**17,987**	**14,112**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		***151,350***	***135,791***

Գործադիր տնօրեն — Վահրամ Մխիթարյան

Գլխավոր հաշվապահ — Թամարա Խուրշուդյան

00848282
Հիմնադրամ
ФОНД
FUND

10-21 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

'000 դրամ	Ծանոթ.	2023	2022
Եկամուտներ			
Եկամուտ շնորհներից	9	36,021	34,802
Եկամուտ մատուցված ծառայություններից	11	45,198	29,779
Այլ եկամուտներ		-	688
Ընդամենը եկամուտներ		***81,219***	***65,269***
Ծախսեր			
Շնորհների գծով ծախսեր	9	(36,021)	(34,802)
Կառավարման և վարչական ծախսեր		(30,034)	(13,505)
Այլ ծախսեր		-	(1,344)
Ընդամենը ծախսեր		***(66,055)***	***(49,651)***
Զուտ եկամուտ		***15,164***	***15,618***
Ֆինանսական եկամուտ		383	232
Շահույթ մինչև հարկումը		**15,547**	**15,850**
Շահութահարկի գծով ծախս	12	(2,887)	(2,853)
Զուտ շահույթ		***12,660***	***12,997***

Գործադիր տնօրեն Վահրամ Մխիթարյան

Գլխավոր հաշվապահ Թամարա Խուրշուդյան

'000 դրամ	*Կուտակված շահույթ*	*Ընդամենը*
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**82,566**	**82,566**
Զուտ շահույթ	12,997	12,997
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**95,563**	**95,563**
Զուտ շահույթ	12,660	12,660
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**108,223**	**108,223**

Գործադիր տնօրեն Վահրամ Մխիթարյան

Գլխավոր հաշվապահ Թամարա Խուրշուդյան

'000 դրամ	*2023*	*2022*
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
դրամաշնորհներից	35,046	34,258
մատուցված ծառայություններից	35,962	33,299
նյութերի, ապրանքների, ծառայությունների ձեռք բերումից	(18,731)	(13,986)
աշխատակիցներին և նրանց անունից կատարված վճարումից	(35,654)	(31,480)
շահութահարկի վճարումից	(2,712)	(346)
այլ հարկերի, պարտադիր վճարների վճարումից	(1,796)	(1,203)
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	***12,115***	***20,542***
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
տոկոսների ստացումից	383	232
հիմնական միջոցների վաճառքից	-	688
հիմնական միջոցների ձեռքբերումից	-	(8,488)
Ներդրումային գործունեությունից դրամական զուտ հոսքեր	***383***	***(7,568)***
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Ֆինանսական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	-	-
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	**12,498**	**12,974**
Դրամական միջոցների մնացորդը առ 1 հունվարի	**35,928**	**22,954**
Դրամական միջոցների մնացորդը առ 31 դեկտեմբերի	**48,426**	**35,928**

Գործադիր տնօրեն Վահրամ Մխիթարյան

Գլխավոր հաշվապահ Թամարա Խուրշուդյան

00848282
Հիմնադրամ
ФОНД
FUND

10-21 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը